31.05.2021
347-80

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի
ղեկավար Վազգեն Ադամյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ադամյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Ճամբարակ համայնքի բնակիչ Ալյոնա Մուժիկյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: 2021թ. մայիսի 17-ին քաղաքացին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել Գեղարքունիքի մարզպետարան՝ խնդրելով տրամադրել իր կողմից օգտագործվող հողատարածքի սեփականաշնորհման վերաբերյալ դիմումի մերժման իրավական հիմքերը: Գեղարքունիքի մարզպետարանը հարցումը վերահասցեագրել է Ճամբարակ համայնքապետարան (Մարզպետարանի վերահասցեագրումը տես՝ սույն գրության 2-րդ էջում): Քաղաքացին, սակայն, մինչ օրս պատասխան չի ստացել Ճամբարակ համայնքապետարանից:

Ուստի ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել քաղաքացու հարցմամբ պահանջվող տեղեկությունները (քաղաքացու հարցման պատճենը՝ սույն գրության 3-րդ էջում):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N_____
------ ----------2021թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ադամյան

Ձեր քննարկմանն է ներկայացվում Ճամբարակ համայնքի բնակիչ Այոնա Մուժիկյանի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված դիմումի պատճենը:

Խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում քննարկել դիմումում բարձրացված հարցերը և մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն:

Առդիր՝ 2 թերթ:

Invalid signature

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Signed by: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հողաշինարարության
և հողօգտագործման
բաժին. Ս. Ղուքասյան
Հեռ. 060650611

ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզպետ
Գնել Սանոսյանին
Գեղարքունիքի մարզի Ճամբարակ
համայնքի բնակիչ Այլոնա Մուժիկյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 52-րդ հոդվածների և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություն, այն իրավական հիմքի մասին, որի հիման վրա մերժվել է Ճամբարակ համայնքի բնակիչ Գագիկ Մուժիկյան դիմումը, ով դիմել էր Ճամբարակի համայնքապետարան, որպեսզի սեփականաշնորհի մի հողատարածք, որը նա օգտագործում է արդեն 50 տարի: Նրան պատասխան նամակով ասում են, որ այդտեղ մոտակա ժամանակները կառուցվելու է խաղահրապարակ: Սակայն օրեր անց պարզ է դառնում , որ այդ տարածքից մեկ մետրը վաճառվել է Ճամբարակ համայնքի մեկ այլ բնակչի:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության(30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանեք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին(հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն , որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ :

Այլոնա Մուժիկյան

Ստորագրություն՝

17.05.2021